ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ - 12/1-15

ք. Արմավիր <<27>> հուլիսի 2012թ.

<<ՀՀ Արմավիրի մարզպետարանը>>, ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ.Կարապետյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և <<Արա և Այծեմնիկ>> ԲԲԸ- ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ջ.Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Ներսիսյան վարժարանի մասնակի վերանորոգման, Վաղարշապատ համայնքի թիվ 13, 14 և 16 մանկապարտեզների լոկալ ջեռուցման համակարգերի կառուցման և Դաշտ համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 Հավելվածով նախատեսված աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետ է սահմանվում 15.09.2012թ.:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով: Սույն պայմանագրում նշված՝ Աշխատանքների կատարման ժամկետները կարող են փոփոխվել Կողմերի համաձայնությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Կապալառուի միջոցներով աշխատանքները կատարելը

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի ներառյալ օրացուցային գրաֆիկի խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժերը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Մինչև Աշխատանքի արդյունքն իրեն հանձնելը, ցանկացած ժամանակ միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ Կապալառուին վճարելով մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքին համարժեք գինը և հատուցել նրան պատճառված վնասները՝ առնվազն 20 օր առաջ տեղեկացնելով այդ մասին Կապալառուին.

3.1.5 Առանց Աշխատանքի արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքների կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն երկու և ավելի անգամ խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը ներառյալ օրացուցային գրաֆիկը,

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի ապահովման համար սահմանված ժամկետները.

3.1.6 Առանց կատարված աշխատանքի դիմաց վճարելու, պահանջել լուծելու սույն պայմանագիրը, եթե Կապալառուից ստացած ոչ հավաստի տեղեկատվության հետևանքով կնքվել է աշխատանքի կատարման այնպիսի պայմանագիր, որը չունի Պատվիրատուի նկատի ունեցած հատկությունները.

3.1.7 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.8 Աշխատանքի արդյունքում, այն ընդունելուց հետո՝ 5 (հինգ) տարվա ընթացքում, Պատվիրատուի կամ այլ անձանց կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող թերություններ հայտնաբերելու դեպքում պահանջել անհատույց վերացնելու այդ թերությունները կամ վերադարձնելու աշխատանքի համար վճարված գնի մասը կամ հատուցելու իր կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը.

3.1.9 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքները կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Մինչև Աշխատանքը Պատվիրատուին հանձնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքի համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 3.1.5 կետով նախատեսված դեպքերի:

3.3.3 Մինչև Աշխատանքը Պատվիրատուին հանձնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ առնվազն 20 օր առաջ այդ մասին տեղեկացնելով Պատվիրատուին:

3.3.4 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և

սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը, իսկ չկատարելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը

ներառյալ օրացուցային գրաֆիկը խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.5 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքները դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանած ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալառուի կողմից սույն պայմանագրով նախատեսված երաշխիքային պայմանների չկատարումը հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

3.4.10 Աշխատանքը հանձնելուց հետո՝ 3 (երեք) տարվա ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում վերացնել այդ թերությունները կամ վերադարձնել աշխատանքի համար սույն պայմանագրով վճարված գնի այն մասը, որը կազմում է թերություններն ամբողջությամբ վերացնելու համար անհրաժեշտ ծախսերի հանրագումարը կամ հատուցել Պատվիրատուի կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը:

4. Աշխատանքների հանձնման և ընդունման կարգը

4.1 Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված գրաֆիկով: Աշխատանքների ընդունումն իրականացվում է Կապալառուի կողմից ներկայացվող, սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 Հավելվածով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրության, ինչպես նաև նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված այլ փաստաթղթերի հիման վրա:

4.1.1 Աշխատանքի կատարման պահից 2 երկու աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում այդ աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

4.2 Պատվիրատուն Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշվետու այլ փաստաթղթերն ստանալու պահից 20 օրվա ընթացքում Կապալառուին է ուղարկում հանձնման-ընդունման՝ ստորագրված արձանագրության մեկ օրինակը կամ դրա պատճառաբանված մերժումը:

4.3 Կապալառուի կողմից ավարտված աշխատանքները կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքները, փուլերը և ծավալները Պատվիրատուի կողմից ընդունված են համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4.4 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.5 Եթե Աշխատանքի ընդունման ժամանակ պարզվի, որ անհրաժեշտ է, ի տարբերություն սկզբնական նախահաշվային փաստաթղթերի, լրամշակել կամ փոփոխել Աշխատանքի առանձին պայմանները, ապա այդ աշխատանքները կատարվում են լրացուցիչ համաձայնագրով՝ նշելով դրանց կատարման ժամկետը և արժեքը:

5. Աշխատանքի գինը և վարձատրությունը

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 96 522 600 (ինսունվեց միլիոն հինգ հարյուր քսաներկու հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, որից 16 087 100 (տասնվեց միլիոն ութսունյոթ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Աշխատանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում.

Չափաբաժին N 1 - ***ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Ներսիսյան վարժարանի մասնակի վերանորոգման*** վերանորոգման համար 36 422 600 (երեսունվեց միլիոն չորս հարյուր քսաներկու հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, որից 6 070 430 (վեց միլիոն յոթանասուն հազար չորս հարյուր երեսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն է:

Չափաբաժին N 2 - ***ՀՀ Արմավիրի մարզի*** *Վաղարշապատ համայնքի թիվ 13 մանկապարտեզի լոկալ ջեռուցման համակարգի կառուցման* համար 13 000 000 (տասներեք միլիոն) ՀՀ դրամ, որից 2 166 670 (երկու միլիոն մեկ հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր յոթանասուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն է:

Չափաբաժին N3 - ***ՀՀ Արմավիրի մարզի*** *Վաղարշապատ համայնքի թիվ 14 մանկապարտեզի լոկալ ջեռուցման համակարգի* կառուցման համար 13 000 000 (տասներեք միլիոն) ՀՀ դրամ, որից 2 166 670 (երկու միլիոն մեկ հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր յոթանասուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն է:

Չափաբաժին N4 - ***ՀՀ Արմավիրի մարզի*** *Վաղարշապատ համայնքի թիվ 16 մանկապարտեզի լոկալ ջեռուցման համակարգի* կառուցման համար 13 000 000 (տասներեք միլիոն) ՀՀ դրամ, որից 2 166 670 (երկու միլիոն մեկ հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր յոթանասուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն է:

Չափաբաժին N5- ***ՀՀ Արմավիրի մարզի*** *Դաշտ համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգման* համար 21 100 000 (քսանմեկ միլիոն մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 3 516 670 (երեք միլիոն հինգ հարյուր տասնվեց հազար վեց հարյուր յոթանասուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն է:

5.1.1. Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված կարգով ընդունելու դեպքում, սակայն ոչ ուշ քան 25-ը դեկտեմբերի 2012թ. պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.2 Սույն պայմանագրով նախատեսնված՝ Աշխատանքի առանձին փուլերի և ծավալների գները ներկայացված են սույն պայամանագրի N 1 հավելվածում: Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված կարգով Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների ընդունելու դեպքում վճարում է Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն եռամսյակում, որում դրամական միջոցները նախատեսված են:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով ներառյալ օրացուցային գրաֆիկը նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5%-ի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարներից:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.3 կետերով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք)

ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատար¬ման վերահսկողության կամ բողոքների

քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը կատարողը (կապալառուն, մատակարարը) ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ կատարողին (կապալառուին, մատակարարին) հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, պատվիրատուն իրավունք ունի միակող-մանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրա¬պետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմա-նագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի (կապալառուի, մատակարարի) համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը (կապալառուն, մատակարարը) պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.5 Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

8.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.7 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N1, N2, N3 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԿԱՊԱԼԱՌՈՒ	***ՊԱՏՎԻՐԱՏՈՒ***
<<Արա և Այծեմնիկ>> ԲԲԸ	*<<[illegible] դպետարան*
ք.Էջմիածին, Նար-Դոսի 3	*ք.Արմավիր, [illegible] 71*
h/h 163118009113	*h/h [illegible]31879*
Հայէկոնոմբանկի Էջմիածնի մ/ճ	*Արմավիրի [illegible]*
ՀՎՀՀ 04704351	*ՀՎՀՀ 04415276*
------- Պետրոսյան	*------- Փ.Կարապետյան*
Կ.Տ	*Կ.Տ*

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Ծավալը (ՀՀ դրամ)	Աշխատանքների կատարման ժամկետը	
			Սկիզբը	Ավարտը
1	Վաղարշապատ համայնքի Ներսիսյան վարժարանի մասնակի վերանորոգում	36 422 600	Պայմանագիրը կնքման օրվանից	15.09.2012թ.
2	Վաղարշապատ համայնքի թիվ 13 մանկապարտեզի լոկալ ջեռուցման համակարգի կառուցում	13 000 000	Պայմանագիրը կնքման օրվանից	15.09.2012թ.
3	Վաղարշապատ համայնքի թիվ 14 մանկապարտեզի լոկալ ջեռուցման համակարգի կառուցում	13 000 000	Պայմանագիրը կնքման օրվանից	15.09.2012թ.
4	Վաղարշապատ համայնքի թիվ 16 մանկապարտեզի լոկալ ջեռուցման համակարգի կառուցում	13 000 000	Պայմանագիրը կնքման օրվանից	15.09.2012թ.
5	Դաշտ համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգում	21 100 000	Պայմանագիրը կնքման օրվանից	15.09.2012թ.
Ընդամենը		96 522 600	Պայմանագիրը կնքման օրվանից	15.09.2012թ.

Պատվիրատու՝

Կ.Տ.

Կապալառու՝

Կ.Տ.

04704351

Հավելված № 1
<<__27__>> հուլիսի 2012թ.
կնքված աշխատանքների կատարման
ՀՀ ԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-12/1-15 գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Չափաբաժին N 1

ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Ներսիսյան վարժարանի մասնակի վերանորոգում

Հ/հ	Աշխատանքների անվանումը	Չ/մ	Քանակը	Արժեքը, հազ. դրամ	
				միավորի	ընդհա-նուրը
1	2	3	4	5	6
	1. ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ				
1	Տանիքի ասբոտերծաքարե ծածկույթի քանդում	մ^2	1080,0	0,18	194,40
2	Կավարամածի և տախտակամածի քանդում	մ^2	1080,0	0,14	151,20
3	Փայտե կոնստրուկցիաների քանդում	մ^3	18,0	16,06	289,08
4	Թիթեղից ջրհորդանների ապամոնտաժում	մ^2	130,0	0,08	10,40
5	Օդափոխության լուսամուտների քանդում, ներառյալ կավարամածը	հատ	8	2,03	16,24
6	Ջրահեռացման խողովակների ապամոնտաժում ձևավոր մասերով	մ	80,0	0,08	6,40
7	Շինաղբի իջեցում տանիքից	տ	26,0	1,29	33,54
8	Շինաղբի ձեռքով բարձում ա/ինքնաթափի վրա և տեղափոխում 5կմ (բացի փայտանյութը)	տ	16,0	2,16	34,56
9	Տանիքի կրող կոնստրուկցիաների կառուցում, մշակված հականեխիչ նյութով	մ^3	27,325	185,64	5072,61
10	Տանիքի ծածկույթ ցինկապատ պրոֆիլավոր թիթեղից d=0,55մմ, կավարամածի պատրաստմամբ, ներառյալ պիպերի տախտակամածը (կավարամած՝ 8,3մ^3, պիպավահան՝ 3,15մ^3)	մ^2	1129,0	5,44	6141,76
11	Ձգալար Ф4Ac-I դասի ամրանից	կգ	17,7	0,42	7,43
12	Բետոնե բարձիկ աստիճանի տակ B15 (M200) դասի 0,3x0,2մ (8 հատ)	մ^3	0,48	48,37	23,22
13	Ձեղնահարկի շերտափեղկավոր լուսամուտ 0,8x0,7մ	հատ	8	53,24	425,92
14	Շերտափեղկավոր լուսամուտի երկշերտ յուղաներկում	մ^2	8,96	1,97	17,65
15	Ձեղնալուսամուտների, պիպերի և գոգնոցների ծածկույթ հարթ ցինկապատ թիթեղով d=0,55մմ	մ^2	144,8	3,10	448,88

16	Ջրհորդան և ցվիք ցինկապատ հարթ թիթեղից d=0,55մմ, տախտակամածի պատրաստմամբ b=0,7մ (փայտանյութ՝ 6,63մ^3)	մ	190,0	9,23	1753,70
17	Ջրհոս խողովակների մոնտաժում Φ140մմ ցինկապատ հարթ թիթեղից d=0,55մմ, ձևավոր մասերի տեղադրմամբ (H=6,86մ)	կ-տ	14	26,96	377,44
18	Խողովակների ամրացման բռնակներ Φ12A500C դասի ամրանից և -30x3 շերտավոր պողպատից	հատ	96	0,94	90,24
19	Փայտե կոնստրուկցիաների հակահրդեհային պաշտպանություն	մ^3	27,325	7,20	196,74
20	Փայտե կավարամածի և տախտակամածի մշակում հակասնկային լուծույթով (1129+190x0,7)	մ^2	1262,0	0,11	138,82
21	Փայտե կավարամածի և տախտակամածի հակահրդեհային պաշտպանություն	մ^2	1262,0	0,16	201,92
22	Փայտե կրող կոնստրուկցիաների հակահրդեհային պաշտպանություն (1045մ^2 մակերես)	մ^3	27,325	5,69	155,48
23	Խարամի ջերմամեկուսիչ շերտի ավելացում	մ^3	130,0	6,77	880,10
	2. ՓԱՅՏԵ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ԵՎ 2 ՀԱՏ ՄՈՒՏՔԻ ԴՌԱՆ				
	1. Քանդման աշխատանքներ				
24	Փայտե պատուհանների քանդում, ներառյալ պատուհանագոգերը (հանձնում պատվիրատուին)	մ^2	330,3	1,71	564,81
25	Մուտքի արտաքին փայտե դռների քանդում	մ^2	12,0	1,04	12,48
26	Շինաղբի (քանդած շեպերի սվաղի) մաքրում, դուրս բերում շենքից, բարձում ա/ինքնաթափի վրա և տեղափոխում 5կմ	տ	14,0	3,46	48,44
27	Փայտե դռների ու պատուհանների դուրս բերում շենքից, տեղափոխում նախատեսված վայր և հանձնում պատվիրատուին	տ	4,5	2,72	12,24
	2. Արտաքին պատերի բացվածքներ				
28	Քարե շարվածքով պատուհանների ներքնամասերի քանդում	մ^3	4,4	18,75	82,50
29	Պատերի շարվածք կանոնավոր տուֆ քարով (պատուհանների վերնամաս)	մ^3	6,35	18,73	118,94
30	Շարվածքի բարելավված սվաղ ցեմենտավազե շաղախով, ճակատի կողմից	մ^2	12,5	1,45	18,13
31	Ճակատների ներկում ճակատային ներկով, ծեփամածկմամբ	մ^2	12,5	0,84	10,50
32	Շինաղբի մաքրում, բարձում ա/ինքնաթափի վրա և տեղափոխում 5կմ	տ	7,92	3,46	27,40
	3. Մետաղապլաստե պատուհաններ				

33	Մետաղապլաստե, սպիտակ պրոֆիլներից, թափանցիկ ապակեփաթեթով, բացվող պատուհանների տեղադրում	մ^2	112,3	30,37	3410,55
34	Նույնը, չբացվող	մ^2	218,0	21,40	4665,20
35	Ներքին պատուհանագոգերի տեղադրում	մ^2	60,0	1,17	70,20
36	Պլաստմասսայե, սպիտակ գույնի պատուհանագոգերի արժեքը 35սմ լայնությամբ	մ	180,05	3,48	626,57
	4. Մետաղապլաստե արտաքին դռներ				
37	Մետաղապլաստե, ապակեփաթեթով, արտաքին բացվող դռներ, ներառյալ սարքերը (2 հատ)	մ^2	4,8	34,70	166,56
38	Նույն դռների չբացվող, ապակեփաթեթով վերնափեղկեր և կողափեղկեր	մ^2	7,2	21,42	154,22
	5. Ներքին հարդարման աշխատանքներ				
39	Պատուհանների և դռների շեպերի սվաղ գաջե շաղախով	մ^2	241,6	4,32	1043,71
40	Շեպերի բարելավված ներկում լատեքսային ներկով, ծեփամածկմամբ	մ^2	241,6	0,87	210,19
	6. Արտաքին հարդարման աշխատանքներ				
41	Շեպերի սվաղ ցեմենտավազե շաղախով	մ	690,0	0,57	393,30
42	Շեպերի ներկում ճակատային ներկով, ծեփամածկմամբ	մ	69,0	0,91	62,83
	Ընդամենը				28366,51
	Շահույթ 7%				1985,66
	Ընդամենը				30352,17
	ԱԱՀ 20 %				6070,43
	Ընդամենը				36422,60

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Արա և Այծեմնիկ>> ԲԲԸ
ք. Էջմիածին, Նար-Դոսի 3
հ/հ 163118009113
Հայէկոնոմբանկի Էջմիածնի մ/ճ
ՀՎՀՀ 04704351
Զ. Պետրոսյան

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արմավիրի մարզպետարան
ք. Արմավիր, Աբովյան 71
հ/հ 900331131079
Արմավիրի ՏԳՐ
ՀՎՀՀ 04415276
Կարապետյան

Հավելված № 1
<<__27__>> հուլիսի 2012թ.
կնքված աշխատանքների կատարման
№ ՀՀ ԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-12/1-15 գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
Չափաբաժին N2

ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատ համայնքի թիվ 13 մանկապարտեզի լոկալ ջեռուցման համակարգի կառուցում»

ՀՀ ը/կ	Աշխատանքի անվանումը	Չափ. միավ.	Քանակը	Միավորի արժեքը հազ.դր.	Ընդհանուր արժեքը հազ.դր.
1	2	3	4	5	6
	1. Ջեռուցում				
1	Երկկոնտուրանի (տուրբո) ջեռուցման կաթսա N=37 կՎտ ծխատարով	հատ	4,00	555,50	2 222,0
2	Ջեռուցման հարթ պողպատե պանելային սարքի տեղադրում L=1.2 մ, հատ	էկմ	62,40	16,05	1 001,5
3	Ջեռուցման հարթ պողպատե պանելային սարքի տեղադրում հատ	էկմ	65,00	15,71	1 021,2
4	Ջեռուցման հարթ պողպատե պանելային սարքի տեղադրում հատ	էկմ	31,20	15,87	495,1
5	Ջեռուցման հարթ պողպատե պանելային սարքի տեղադրում հատ	էկմ	13,65	17,10	233,4
6	Ալյումինե ջեռուցման մարտկոցների մոնտաժում, H=500 մմ, N=125 Վտ (351	Էկմ	98,28	11,27	1 107,6
7	Շրջանառու պոմպ 25/1-4, N=45 Վտ	կ-տ	4,00	88,97	355,9
8	Կենտրոնախույզ խուղակային օդամուղ L=50 մ^3/ժամ, N=14 Վտ, H=90 Պա	կ-տ	4,00	15,24	61,0
9	Ջերմակարգավորիչ փական Ի 15 մմ	հատ	33,00	7,93	261,7
10	Ի 20/15 մմ մետաղապլաստե խողովակի մոնտաժում	մ	338,00	2,01	679,4
11	Ի 25/20 մմ մետաղապլաստե խողովակի մոնտաժում	մ	350,00	1,71	598,5
12	Ի 32/25 մմ մետաղապլաստե խողովակի մոնտաժում	մ	410,00	1,63	668,3
13	Ի 40/32 մմ մետաղապլաստե խողովակի մոնտաժում	մ	21,00	2,25	47,3
14	Ի 40/32 մմ գնդիկավոր փականի մոնտաժում	հատ	4,00	4,12	16,5
15	Ի 32/25 մմ գնդիկավոր փականի մոնտաժում	հատ	4,00	3,74	15,0
16	Ի 20/15 մմ գնդիկավոր փականի մոնտաժում	հատ	50,00	2,92	146,0
17	Ձևավոր մասեր	հատ	218,00	0,63	137,3
18	Ի 40/32 մմ հակադարձ փականի մոնտաժում	հատ	2,00	4,00	8,0
19	Ի 32/25 մմ հակադարձ փականի մոնտաժում	հատ	2,00	3,74	7,5

1	2	3	4	5	6
20	Մետաղապլաստե խողովակի ամրացում	հատ	958,00	0,03	28,7
21	Ի 50 մմ անցքի բացում առաստաղում և պատի մեջ	հատ	56,00	0,33	18,5
22	Անցքի փակում բետոնով B 15 դասի	$մ^3$	0,17	78,15	13,3
23	Ի 15 մմ ռետինե խողովակ	մ	15,00	1,00	15,0
24	Ի 32/25 մմ ավտոմատ օդահան փականի մոնտաժում	հատ	19,00	5,13	97,5
25	Ի 25/20 մմ ավտոմատ օդահան փականի մոնտաժում	հատ	15,00	4,00	60,0
26	Ի 20/15 մմ ավտոմատ օդահան փականի մոնտաժում	հատ	4,00	3,50	14,0
27	Ի 15 մմ պտուտակավոր օդահան փականի մոնտաժում	հատ	90,00	0,36	32,4
28	Մարտկոցների ամրացման խամուտ և խցաններ	հատ	90,00	2,65	238,5
29	Ջեռուցման սարքի վերին միկրոփական	հատ	57,00	3,63	206,9
30	Ջեռուցման սարքի ներքին միկրոփական	հատ	90,00	3,52	316,8
	Ընդամենը				**10124,61**
	Շահույթ 7%				**708,72**
	Ընդամենը				**10833,33**
	ԱԱՀ 20 %				**2166,67**
	Ընդամենը				**13000,00**

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Արա և Այծեմնիկ>> ԲԲԸ
ք.Էջմիածին, Նար-Դոսի 3
h/h 163118009113
Հայէկոնոմբանկի Էջմիածնի մ/6
ՀՎՀՀ 04704351
Փեփրոսյան

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արմավիրի մարզպետարան
ք.Արմավիր, Աբովյան 71
h/h 900331131079
Արմավիրի ՏԳԲ
ՀՎՀՀ 04415276
Փարապետյան

Հավելված № 1
<<__27__>> հուլիսի 2012թ.
կնքված աշխատանքների կատարման
№ ՀՀ ԱՄ-ԲԸԱՀ-ԱԾՁԲ-12/1-15 գնման պայմանագրի

ՃԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Չափաբաժին N3

ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատ համայնքի թիվ 14 մանկապարտեզի լոկալ ջեռուցման համակարգի կառուցում»

ՀՀ ը/կ	Աշխատանքի անվանումը	Չափ. միավ.	Քանակը	Միավորի արժեքը հազ.դր.	Ընդհանուր արժեքը հազ.դր.
1	2	3	4	5	6
	1. Ջեռուցում				
1	Երկկոնտուրանի (տուրբո) ջեռուցման կաթսա N=37 կՎտ ծխատարով	հատ	4,00	547,13	2 188,5
2	Ջեռուցման հարթ պողպատե պանելային սարքի տեղադրում L=1.6 մ, H=500 մմ, N=1920 Վտ- 16 սեկցիա, n=3 հատ	էկմ	15,60	14,87	232,0
3	Ջեռուցման հարթ պողպատե պանելային սարքի տեղադրում L=1.2 մ, H=500 մմ, N=1860 Վտ-12 սեկցիա, n=16 հատ	էկմ	62,40	15,77	984,0
4	Ջեռուցման հարթ պողպատե պանելային սարքի տեղադրում L=1.0 մ, H=500 մմ, N=1560 Վտ-10 սեկցիա, n=12 հատ	էկմ	39,00	15,44	602,2
5	Ջեռուցման հարթ պողպատե պանելային սարքի տեղադրում L=0.8 մ, H=500 մմ, N=1240 Վտ- 8 սեկցիա, n=16 հատ	էկմ	41,60	15,60	649,0
6	Ջեռուցման հարթ պողպատե պանելային սարքի տեղադրում L=0.7 մ, H=500 մմ, N=1090 Վտ- 7 սեկցիա, n=10 հատ	էկմ	22,75	16,80	382,2
7	Ալյումինե ջեռուցման մարտկոցների մոնտաժում, H=500 մմ, N=125 Վտ (341 հատx0.28)	էկմ	95,48	11,08	1 057,9
8	Շրջանառու պոմպ 25/1-4, N=45 Վտ	կ-տ	4,00	87,46	349,8
9	Կենտրոնախույզ խուղակային օդամուղ , L=50 մ^3/ժամ, N=14 Վտ, H=90 Պա	կ-տ	4,00	14,98	59,9
10	Ջերմակարգավորիչ փական ∅ 15 մմ	հատ	29,00	7,79	225,9
11	∅ 20/15 մմ մետաղապլաստե խողովակի մոնտաժում	մ	363,00	1,98	718,7
12	∅ 25/20 մմ մետաղապլաստե խողովակի մոնտաժում	մ	257,00	1,69	434,3
13	∅ 32/25 մմ մետաղապլաստե խողովակի մոնտաժում	մ	500,00	1,61	805,0
14	∅ 40/32 մմ մետաղապլաստե խողովակի մոնտաժում	մ	21,00	2,21	46,4
15	∅ 40/32 մմ գնդիկավոր փականի մոնտաժում	հատ	4,00	4,05	16,2
16	∅ 32/25 մմ գնդիկավոր փականի մոնտաժում	հատ	4,00	3,68	14,7
17	∅ 20/15 մմ գնդիկավոր փականի մոնտաժում	հատ	52,00	2,87	149,2
18	Ձևավոր մասեր	հատ	222,00	0,62	137,6
19	∅ 40/32 մմ հակադարձ փականի մոնտաժում	հատ	2,00	3,92	7,8
20	∅ 32/25 մմ հակադարձ փականի մոնտաժում	հատ	2,00	3,68	7,4
21	Մետաղապլաստե խողովակի ամրացում	հատ	977,00	0,02	19,5

1	2	3	4	5	6
22	∅ 50 մմ անցքի բացում առաստաղում և պատի մեջ	հատ	58,00	0,32	18,6
23	Անցքի փակում բետոնով B 15 դասի	$մ^3$	0,17	76,83	13,1
24	∅ 15 մմ ռետինե խողովակ	մ	15,00	0,99	14,9
25	∅ 32/25 մմ ավտոմատ օդահան փականի մոնտաժում	հատ	18,00	5,04	90,7
26	∅ 25/20 մմ ավտոմատ օդահան փականի մոնտաժում	հատ	13,00	3,92	51,0
27	∅ 20/15 մմ ավտոմատ օդահան փականի մոնտաժում	հատ	7,00	3,43	24,0
28	∅ 15 մմ պտուտակավոր օդահան փականի մոնտաժում	հատ	93,00	0,35	32,6
29	Մարտկոցների ամրացման խամուտ և խցաններ	հատ	93,00	2,60	241,8
30	Ջեռուցման սարքի վերին միկրոփական	հատ	64,00	3,56	227,8
31	Ջեռուցման սարքի ներքին միկրոփական	հատ	93,00	3,46	321,8
	Ընդամենը				**10124,61**
	Շահույթ 7%				**708,72**
	Ընդամենը				**10833,33**
	ԱԱՀ 20 %				**2166,67**
	Ընդամենը				**13000,00**

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Արա և Այծեմնիկ>> ԲԲԸ
ք.Էջմիածին, Նար-Դոսի 3
h/h 163118009113
Հայէկոնոմբանկի Էջմիածնի մ/6
ՀՎՀՀ 04704351
[illegible]ոնյան

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արմավիրի մարզպետարան
ք.Արմավիր, Աբովյան 71
h/h 900331131079
Արմավիր [illegible]
[illegible]կարապետյան

Հավելված № 1
<<__27__>> հուլիսի 2012թ.
կնքված աշխատանքների կատարման
№ ՀՀ ԱՄ-ԲԸԱՀ-ԱԾՁԲ-12/1-15 գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
Չափաբաժին N 4

ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատ համայնքի թիվ 16 մանկապարտեզի լոկալ ջեռուցման համակարգի կառուցում»

ՀՀ ը/կ	Աշխատանքի անվանումը	Չափ. միավ.	Քանակը	Միավորի արժեքը հազ.դր.	Ընդհանուր արժեքը հազ.դր.
1	2	3	4	5	6
	1. Ջեռուցում				
	Ա. Ապամոնտաժման աշխատանքներ				
1	Գոյություն ունեցող կոնվեկտորի ապամոնտաժում	հատ	80,00	0,76	60,8
2	Գոյություն ունեցող մինչև Ի 50 մմ պողպատե խողովակի ապամոնտաժում	մ	300,00	0,44	132,0
3	Ապամոնտաժված սարքերի և խողովակների հավաքում, բարձում ա/մ և տեղափոխումը 5 կմ հեռավ.	տ	2,10	3,23	6,8
	II. Մոնտաժային աշխատանքներ				
4	Երկկոնտուրանի (տուրբո) ջեռուցման կաթսա N=37 կՎտ ծխատարով	հատ	2,00	545,41	1 090,8
5	Ջեռուցման հարթ պողպատե պանելային սարքի տեղադրում	էկմ	23,80	15,02	357,5
6	Ջեռուցման հարթ պողպատե պանելային սարքի տեղադրում	էկմ	17,80	15,92	283,4
7	Ջեռուցման հարթ պողպատե պանելային սարքի տեղադրում	էկմ	93,60	15,70	1 469,5
8	Ջեռուցման հարթ պողպատե պանելային սարքի տեղադրում	էկմ	22,30	15,60	347,9
9	Ջեռուցման հարթ պողպատե պանելային սարքի տեղադրում	էկմ	13,00	17,52	227,8
10	Ջեռուցման հարթ պողպատե պանելային սարքի տեղադրում	էկմ	6,70	15,12	101,3
11	Ջեռուցման հարթ պողպատե պանելային սարքի տեղադրում	էկմ	23,80	15,75	374,9
12	Ջեռուցման հարթ պողպատե պանելային սարքի տեղադրում	էկմ	5,20	16,96	88,2
13	Ջեռուցման հարթ պողպատե պանելային սարքի տեղադրում	էկմ	13,40	17,04	228,3
14	Ալյումինե ջեռուցման մարտկոցների մոնտաժում, H=500 մմ, N=125 Վտ (567	Էկմ	90,72	11,20	1 016,1
15	Շրջանառու պոմպ 25/6-4, N=45 Վտ	կ-տ	2,00	88,31	176,6
16	Կենտրոնախույզ խուղակային օդամուղ L=50 մ^3/ժամ, N=14 Վտ, H=90 Պա	կ-տ	2,00	15,13	30,3
17	Ջերմակարգավորիչ փական d=1/2	հատ	32,00	7,87	251,8
18	Ի 20/15 մմ մետաղապլաստե խողովակի մոնտաժում	մ	625,70	2,00	1 251,4
19	Ի 25/20 մմ մետաղապլաստե խողովակի մոնտաժում	մ	491,40	1,70	835,4
20	Ի 32/25 մմ մետաղապլաստե խողովակի մոնտաժում	մ	161,10	1,62	261,0
21	Ի 40/32 մմ մետաղապլաստե խողովակի մոնտաժում	մ	44,60	2,23	99,5
22	Ի 40/32 մմ գնդիկավոր փականի մոնտաժում	հատ	6,00	4,09	24,5
23	Ի 32/25 մմ գնդիկավոր փականի մոնտաժում	հատ	9,00	3,71	33,4
24	Ի 25/20 մմ գնդիկավոր փականի մոնտաժում	հատ	7,00	3,20	22,4

1	2	3	4	5	6
25	Ի 20/15 մմ գնդիկավոր փականի մոնտաժում	հատ	30,00	2,90	87,0
26	Ջնավոր մասեր	հատ	259,00	0,63	163,2
27	Ի 40/32 մմ հակադարձ փականի մոնտաժում	հատ	3,00	3,96	11,9
28	Ի 32/25 մմ հակադարձ փականի մոնտաժում	հատ	1,00	3,71	3,7
29	Մետաղապլաստե խողովակի ամրացում	հատ	1848,00	0,03	55,4
30	Ի 50 մմ անցքի բացում ջեռուցման խողովակի համար	հատ	74,00	0,33	24,4
31	Անցքի փակում առաստաղի վրա բետոնով B 15 դասի	$մ^3$	0,03	77,57	2,3
32	Անցքերի փակում պատի մեջ բետոնով B 15 դասի	$մ^3$	0,17	94,86	16,1
33	Ի 15 մմ ռետինե խողովակ	մ	8,50	1,00	8,5
34	Ի 40/32 մմ ավտոմատ օդահան փականի մոնտաժում	հատ	1,00	6,20	6,2
35	Ի 32/25 մմ ավտոմատ օդահան փականի մոնտաժում	հատ	2,00	5,08	10,2
36	Ի 25/20 մմ ավտոմատ օդահան փականի մոնտաժում	հատ	10,00	3,96	39,6
37	Ի 20/15 մմ ավտոմատ օդահան փականի մոնտաժում	հատ	6,00	3,46	20,8
38	Ի 15 մմ պտուտակավոր օդահան փականի մոնտաժում	հատ	101,00	0,36	36,4
39	Մարտկոցների ամրացման խամուտ և խցաններ	հատ	101,00	2,63	265,6
40	Ջեռուցման սարքի վերին միկրոփական	հատ	69,00	3,60	248,4
41	Ջեռուցման սարքի ներքին միկրոփական	հատ	101,00	3,50	353,5
	Ընդամենը				**10124,61**
	Շահույթ 7%				**708,72**
	Ընդամենը				**10833,34**
	ԱԱՀ 20 %				**2166,67**
	Ընդամենը				**13000,00**

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Արա և Այծեմնիկ>> ԲԲԸ
ք.Էջմիածին, Նար-Դոսի 3
հ/հ 163118009113
Հայէկոնոմբանկի Էջմիածնի մ/ճ
ՀՎՀՀ 04704351
Պետրոսյան

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Արմավիրի մարզպետարան
ք.Արմավիր, Աբովյան 71
հ/հ 900331131079
Արմավիրի ՏԳԲ
ՀՎՀՀ 04415276
Կարապետյան

Հավելված № 1
<<_27_>>____07_____2012թ.
կնքված աշխատանքների կատարման
№ ՀՀ ԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-12/1-15 գնման պայմանագրի

ՇԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
ՉԱՓԱԲԱԺԻՆ N-5
ՀՀ Արմավիրի մարզի Դաշտ համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգում

Հ/հ	Աշխատանքների անվանումը	Չ/մ	Քանակը	Արժեքը, հազ. դրամ	
				միավորի	ընդհա-նուրը
1	2	3	4	5	6
1	Կերամոգրանիտե հատակների իրականացում	100 մ^2	2	880,06	1760,12
2	8 մմ հաստությամբ լամինատե հատակների իրականացում շրիշակներով	քմ	315	5,78	1820,70
3	Պատերի ներկում լատեքսային ներկով	100քմ	3,24	131,24	425,22
4	Նույնը առաստաղների	100քմ	4,84	141,54	685,05
5	Պատի յուղաներկում 1,5մ բարձրությամբ	100 մ^2	5,1	103,22	526,42
6	Արտաքին մակերեսների սվաղում ցեմ, շաղախով	քմ	450	3,45	1552,50
7	Արտաքին պատերի ներկում ֆասադային ներկով	քմ	918	3,80	3488,40
8	2x40 Վտ, 220 Վ լյումինեսցենտային լամպով	100 հատ	0,5	855,16	427,58
	Ցանկապատ				
9	Մետաղական ցանցավոր ցանկապատի պոխում	տն	3,5	28,57	100,00
10	Խողովակ d=76մմ,պատի հաստ.-3մմ	գծմ	116	2,75	319,00
11	Մետաղական ցանց	քմ	155	0,49	75,95
12	Անկյունակ 35*35*4մմ	գծմ	368	1,05	386,40
13	Գլոցվածք f=8մմ	տն	0,08	422,17	33,77
14	Մետաղական մասերի յուղաներկում 2 անգամ k=2	100քմ	3,3	146,33	482,89
15	IV կարգի գրունտներում պոստրակի քանդում 0,8մ խորությամբ	տեղ	67	1,50	100,50
16	Սյուների հիմքերի բետոնացում B15 բետոնով	խմ	8,3	42,60	353,58
17	Դարպասի և դռան տեղադրում	քմ	7,5	10,25	76,88
18	Մետաղական ցանկապատի տեղադրում տեղահանված ցանկապատով	տն	0,8	28,57	22,86
	Ծածկոցներ				
19	IV կարգի գրունտներում փոսորակի քանդում	տեղ	10	1,50	15,00
20	Սյուների հիմքերի բետոնացում B15 բետոնով	խմ	1,6	42,60	68,16
21	Ծածկոցների իրականացում	100քմ	0,21	184,92	38,83
22	100*100 քառակուսի խողովակներ	գծմ	42	4,68	196,56
23	Ուղղանկյուն խողովակ 80*40*3մմ	գծմ	78	2,69	209,82

24	Քառակուսի խողովակ 30*30*2մմ	գծմ	30	0,91	27,30
25	Քառակուսի խողովակ 25*25*2մմ	գծմ	5,5	0,72	3,96
26	Քառակուսի խողովակ 40*40*2մմ	գծմ	48	1,14	54,72
27	Ծածկի իրականացում 0,5մմ պրոֆ. Ց-թիթեղով	քմ	21	2,95	61,95
28	Գագաթի ցինկապատ թիթեղ 0,5մմ	քմ	2,5	3,19	7,98
29	Փայտյա չորսսու 50*50մմ	խմ	0,1	143,78	14,38
30	20 սմ լայնությամբ պլաստմասե զունավոր առաստաղներ	քմ	26,0	2,51	65,26
31	Մետաղական մասերի յուղաներկում 2 անգամ	100քմ	0,11	146,33	16,10
	Տարածքի բարեկարգում,ասֆալտապատում				
32	Եռնամուտքի բետոնե հարթակի և աստիճանների իրականացում B15 բետոնով	խմ	0,97	53,10	51,51
33	Գլխավոր մուտքի բետոնե հարթակի քանդում	խմ	0,8	15,28	12,22
34	Բազալտե աստիճանների քանդում	100գծմ	0,15	100,11	15,02
35	Բազալտե աստիճանների տեղադրում նոր նյութի ավելացումով մինչեվ 20%	գծմ	15,4	4,66	71,76
36	3սմ հաստությամբ բազալտե սալերով հարթակի երեսապատում	քմ	7,31	18,80	137,43
37	Տարածքի հարթեցում ձեռքով	100քմ	4,6	5,97	27,46
38	Ավազակոպիճային նախապատրաստական շերտ 12սմ	100քմ	4,6	46,92	215,83
39	5սմ հաստ. միաշերտ ասֆալտբետոնի իրականացում	100քմ	4,6	527,39	2425,99
40	Շին աղբի բարձում և տեղափոխում 3կմ	տն	17	3,41	57,97
	Ընդամենը				**16433,02**
	Շահույթ 7%				**1150,31**
	Ընդամենը				**17583,34**
	ԱԱՀ 20 %				**3516,67**
	Ընդամենը				**21100,00**

/Քսանմեկ միլիոն հարյուր հազար ՀՀ դրամ/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Արա և Այծեմնիկ>> ԲԲԸ
ք.Էջմիածին, Նար-Դոսի 3
հ/հ 163118009113
Հայէկոնոմբանկի Էջմիածնի մ/ճ
ՀՎՀՀ 04704351
Ձ. Պետրոսյան

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արմավիրի մարզպետարան
ք.Արմավիր, Աբովյան 71
հ/հ 9003[illegible]079
Ար[illegible] ՏԳՒ
ՀՎՀՀ 0441[illegible]
Ֆ. Կարապետյան

Հավելված № 2
<<__27_>>_____07_____ 2012թ.
կնքված աշխատանքների կատարման
№ ՀՀ ԱՄ-ԲԸԱՀ-ԱԾՁԲ-12/1-15 գնման պայմանագրի

Կապալառու	Պատվիրատու
_____	_____
_____	_____
հասցե_____	հասցե_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> _____ 20 թ.

Պայմանագրի անվանումը՝----------

Պայմանագրի կնքման ամսաթիվը <<____>> _____20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____
և կատարողը՝ ի դեմս_____ , հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ <<____>> _____20 թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի /պատասխանատու ստորաբաժանման/ N եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները /այսուհետև՝ աշխատանքներ/ համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Կատարողը <<____>> _____20 թ.-ից ՝ <<____>> _____20 թ.ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ ժամանակա-ցույցի/
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
(ստորագրություն)	(ստորագրություն)
ազգանուն _____	ազգանուն _____

Հավելված № 3
<<_27_>>_ 07 _ 2012թ.
կնքված աշխատանքների կատարման
№ ՀՀ ԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-12/1-15 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(հազար ՀՀ դրամ)

N Ը/Կ	Գնման առարկայի անվանումը	Ֆինանսավորման գումարը ՀՀ 2012թ. պետական բյուջեով նախատեսված միջոցներից ըստ ամիսների՝ ընդ որում						
		հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	Վաղարշապատ համայնքի Ներսիսյան վարժարանի մասնակի վերանորոգում		34601,00	34601,00	36422,60	36422,60	36422,60	36422,60
2	Վաղարշապատ համայնքի թիվ 13 մանկապարտեզի լոկալ ջեռուցման համակարգի կառուցում		13000,00	13000,00	13000,00	13000,00	13000,00	13000,00
3	Վաղարշապատ համայնքի թիվ 14 մանկապարտեզի լոկալ ջեռուցման համակարգի կառուցում		13000,00	13000,00	13000,00	13000,00	13000,00	13000,00
4	Վաղարշապատ համայնքի թիվ 16 մանկապարտեզի լոկալ ջեռուցման համակարգի կառուցում		13000,00	13000,00	13000,00	13000,00	13000,00	13000,00
5	Դաշտ համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգում		20045,00	20045,00	21100,00	21100,00	21100,00	21100,00

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով*

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Արա և Այծեմնիկ>> ԲԲԸ
ք.Էջմիածին, Նար-Դոսի 3
հ/հ 163118009113
Հայէկոնոմբանկի Էջմիածնի մ/ճ
ՀՎՀՀ 04704351

Ջ.Պետրոսյան

Կ.Տ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արմավիրի մարզպետարան
ք.Արմավիր, Աբովյան 71
հ/հ 900331131079
Արմավիրի ՏՀ
ՀՎՀՀ 04415276

Փ. Կարապետյան

Կ.Տ